ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ 94-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ արարատցիներ, այսօր նշում ենք մեր սիրելի քաղաքի, մեր տան՝ Արարատի օրը:

Ուզում եմ սրտանց շնորհավորել մեր բոլորիս միավորող, մեր սիրելի քաղաքի տոնի առթիվ:

Ինքներդ էլ տեսնում եք, որ մեր քաղաքում ամենօրյա հետևողական աշխատանքներ են տարվում կոմունալ, տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման, ճանապարհների խնդիրների լուծման, փողոցների, այգու բարեկարգման, կրթության, մշակույթի, սպորտի և այլ ոլորտների որակի բարելավման ուղղությամբ:

Հավաստիացնում եմ ձեզ, որ համայնքապետարանի ամբողջ աշխատակազմը նույնպես ջանք ու եռանդ չի խնայում, որ մեր քաղաքն օրեցօր էլ ավելի գեղեցկանա և ձեզ ներկայանա նոր գույներով:

Վստահ եմ՝ ամեն անցնող տարին ամփոփելիս բոլորս կկարողանանք խոսել նոր ձեռքբերումների, հաջողությունների և իրականացված ծրագրերի մասին:

Հարգելի՛ արարատցիներ, համախմբված, բոլորս միասին, ձեռք ձեռքի տված պետք է կառուցենք մեր երազանքների քաղաքը:

Սիրե՛նք մեր քաղաքը, փայփայենք, լինենք սրտացավ և հոգատար մեր քաղաքի հանդեպ: Մեր քաղաքն արժանի է այդ սիրուն:

Տոնդ շնորհավոր, մեր 94-ամյա երիտասարդ և գեղեցիկ քաղաք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ